

Նիկողայոսի Զաքարեան Նարինանեանց, երեցփոխանի եկեղեցւոյն Կոջորի վասն ազգօգուտ և ժրաջան պաշտօնավարութեան նորին. թ. 644:

— Սրհնութեան և գոհունակութեան յանուն Մեծ. պ. Ստեփաննոսի Կարապետեան Հին Նախիջևանցւոյ, յաղագս վաստակոց նորա ի գործ նուիրաբերութեան երկուց եկեղեցեաց տեղւոյն. թ. 651:

— Սրհնութեան և գոհունակութեան յանուն Գենեբալ Լէյտենանտ Իսմայիլ խանի Նախիջևանսկոյ, յաղագս նուիրաբերութեան նորա երկուց սեփական դետնոց ի տիրապետութիւն ս. Գէորգ և ս. Երրորդութիւն եկեղեցեաց Նախիջևան քաղաքի. թ. 652:



ՈՂԲԱՅՈՂ ԶԻՆՈՒՈՐԻ ԿԵԱՆՔ

Արեան դաշտէն ձայն արկանեմ,
Ո՛վ անձկալիդ իմ Հայրենիք,
Ընտանիք իմ և սիրելիք,
Զինուորիս սղբ մըտիկ արէք:
Ես զինուոր եմ Ղարապաղցի,
Այն քաջ արանց Հայրենիքէն,
Եւ տոհմական տան շառաւիղ.
Ունիմ ուսումնս և կրթութիւն
Զինուորական ասպարիզին,
Քաջ քաջ կռուել դէմ թշնամւոյն,
Եղբայր եղբօր թափել արիւն:
Հրաման առի անակնկալ,
Երթալ ի կռիւ արեան դաշտ,
Հասաւ ինձ ո՛հ ժամ դառնագին,
Որ ես թողում իմ Հայրենիք
Եւ ընտանիք և սիրելիք:

Մնաք բարով հայր իմ և մայր,
Իմ անձկալի քորք և եղբարք,

Մի կուժ դուր ջուր թափէր ետև,
 Որ ես ողջամբ դառնամ առ Ձեզ.
 Այդ բան հաւատ է ՚ի վաղուց
 Ընտանեկան աւանդութիւն:
 Ես լսել եմ թէ վանեցիք
 Այսպէս առնեն, երբ բաժնուին
 Հայրենի տուն գերդաստանէն,
 Խեղճ ընտանիք թողուն անտէր,
 Երթան օտար երկիր նժդեհ.
 Հէք Հայու կեանք այսպէս է միշտ:
 Դուցէ պանդուխտ դառնայ ողջամբ,
 Այլ ստոյգ չէ իմ վերադարձ.
 Ո՛հ ես երթամ կրակի բերան,
 Իցէ՛ արդեօք, որ ողջ դառնամ
 Եւ ողջունեմ զՁեզ ուրախ:
 Բարի լուսի աղօթարան
 Երբ կը բացուի առաւօտեան՝
 Աղօթէ մայր իմ ջերմեռանդ,
 Աստուած լսէ քո պաղատանք:
 Հայրիկ, մի բան ունիմ կտակ,
 Դու կատարէ յօժարաբար.
 Աստուած չանէ որ դու լսես
 Դառնագին գոյժ քո որդեկիդ՝
 Մեր տոհմական գերեզմանոց
 Շինէ շիրիմ դու իմ թափուր,
 Մի խաչէ քար կանգնէ վերէն,
 Ի յիշատակ քոյդ Լեոնին:
 Հասաւ տխուր ժամ բաժանման,
 Առի զէնքերս և իմ հրացան,
 Ճեպով հասի ես մահու դաշտ.
 Պատերազմի փողը հնչեց,
 Եւ կազմեցաւ ճակատամարտ.
 Երկուստեք կուռ բանակներ
 Սև ամպերի պէս գոռացին,
 Մահացուցիչ հրացող գնտակ

Կարկուտի պէս թափեցին,
Բիւր բիւր հազար ողջ զինուորներ
Տապալէին գետնին երես:

Ո՛հ, իմ բաժին էր մի գնտակ,
Որ դէպ ուղիղ զարկաւ ծնկանս,
Փըշեց ոսկերս, կծկեցան ջիղքս,
Եւ ես անկայ կիսամեռ.

Ինչպէս հսկայ ծառն անտառին
Ուժգին հողմէն կամ տապարէն
Վայր անկանի, գըրգըւն հանէ,
Ճղակոտոր փռի գետին:

Էլ չէր պիտոյ ինձ վիրաբոյժ,
Իմ կեանքն անպէտ էր և անյոյս.
Զիս բանակէն վերուցին դուրս,
Տարան դրին խոր վհին մօտ.

Վիհն էր պատրաստ լայն ընդարձակ,
Մէք զինուորներս փորեցինք զայն,
Ո՛հ մեր ձեռքով մեր գերեզման:
Հազար հազար մեռեալներուն
Մի գերեզման է հողաբլուր:

Զինուոր չունի իւր դամբարան
Հօրենական պապկենական,
Եւ ոչ գլխոյն մի խաչաքար,
Քրիստոնէին սուրբ նշանակ.
Ոչ անունս, ոչ յիշատակ,—
Եւ ո՞վ յիշէ զիս անմոռաց.
Կորչի անունս անյիշատակ:

Մի երբէք ինձ չքեղ դագաղ,
Դիակարդին ունայն պատրանք.
Զեն պիտոյ ինձ թափօր թաղման,
Ոչ սիրելիք, ոչ բարեկամք,
Ոչ ընտանիք յուզարկաւոր:

Հանէք անձէս իմ համազգեստ,
Առէք նշանս և իմ զէնքերս,
Թողէք բաժին ինձ միայն՝

Ի՞մ արիւնոտ շապիկ պատան։
 Զինուորի դին չունի պատիւ,
 Յոտից քարշեալ ձգեն ՚ի վիհ,
 Որպէս խրճուէր ՚ի կալոցին
 Դիզեալ կուտին ՚ի բարդոցին.
 Ոչ խաչակնիք քահանային,
 Թէ գերեզմանս անշարժ լիցի։
 Մահու դաշտէն ուղեւորեալ
 Հասինք ահա մեր հանգիստ,
 Հանդէսէք արդ քուն անխռով,
 Արեան դաշտի խոնջեալ զինուորք։

Այլ մինչ հնչէ Գաբրէլի փող,
 Շարժի յայնժամ մեր հողաբլուր.
 Եւ մեք յառնեմք ՚ի կեանս նոր
 Որպէս արծուի նորափետուր։

Գայ Քրիստոս տէր դատաւոր,
 Ահեղ և մեծ է այն օր.
 Գահերն ամէն կոչին յատեան,
 Տալ զհամար իւրաքանչիւր
 Աշխարհավար տնտեսութեան։
 Արդար Աստուած միթէ թողո՞ւ,
 Անտէս առնու մեր դատաստան,
 Զինուորներուս թափած արիւն
 Զը բողոքէ՞ նորա ատեան։

Ողջամբ մնասցիք դուք, ո՞վ զինուորք,
 Կտակ թողում Ձեզ յետ մահուս.
 Սուր առի ես, սրով անկայ,
 Յուշ առնեմ Ձեզ Քրիստոսի բան։

Աստուած ստեղծ զմարդն հողագործ,
 Դաշտի մշակ աշխատաւոր.
 Անէ՛ծք ձեռին այն չարարուեստ,
 Որ զմարդ արար արիւնագործ։
 Ասեն գիտունք աշխարհաբան՝
 Գայ ժամանակ մեզ ոսկեգար,
 Գահերն ամէն գան ՚ի համբոյր,

Ուխտեն դընել սուրն 'ի պատեան.
Առիւծն դառնայ հեղ անմուռնչ,
Գայլ ընդ գառին շրջին յարօտ,
Արեան դաշտեր ծաղկին շուշան.
Խաղաղութիւն տիրէ աշխարհ:

Այդ երազ է, չեմ հաւատար,
Եւ միտ բերեմ Գրիստոսի բան.
Յարիցեն ազգ ազգի վերայ,
Աշխարհ դառնայ մի ծով արեան.
Քանի կայ մեր հողէ աշխարհ,
Կան տիրապետք աշխարհակալ,
Զէնք և զինուորք ահեղ բանակը՝
Հէք մարդոյն կեանք կռիւ է կռիւ.
Եւ ուր արդեօք խաղաղութիւն,—
'ի գերեզման, 'ի գերեզման.
Ինչպէս խաղաղ կան հողին տակ
Մեծն Աղէքսանդր և Նաբօլէոն՝
Անանուն անյիշատակ.

Արեան դաշտի զինուորն անբաղդ
Իւր յիշատակ թողուց այս ողբ.
Յիշեցէք դուք որ ընթեռնուք,
Այս է ահա զինուորին կեանք,
Եւ դառնավիշտ իւր վախճան.

